



## ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ Ա. ՂՈՒ Ա. Ն. Ե Ա. Ն.

Ծնեալ վան քաղաքում 1827 թ. և վախճանեալ  
1893 դեկտ. 8 ի հին Զուղայ 66 ամաց:

Հանգուցեալը դեռ աշխարհական ժամանակ, երբ վաճա-  
ռականութեամբ կպարապէր, գործակից է եղած Խրիմեան  
Հայրիկին — ներկայ վեհ. Կաթողիկոսին, որի գաղափար-  
ներով գրաւուած կուսակրօնութիւն է ընդունել վարա-  
գայ վանքում Մարգար Եպիսկոպոսից 1862 թ.:

Երկու անգամ՝ 1863—65. և 68 թ. Մուշի Ս. Կա-  
րապետի վանուց Առաջնորդական տեղապահի պաշտօնն է  
վարել. 1860—72 թ. վարում է Տարօնոյ առաջնորդական  
պաշտօնն. այս իսկ ժամանակներում ստանում է Կ. Պօլսոյ  
Պատրիարքից ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք. երջան-  
կայիշատակ Գէորգ Կաթողիկոսից վարդապետական լան-  
ջախաչ և Սուլթանից Մեծիտիեայի երրորդ կարգի շքա-  
նշան: 1872—75 թ. վանի առաջնորդական պաշտօնն է  
վարել, իսկ Կարս և Պաթում նահանգներում 12 տարի  
այն է 1876—1887:

Վինելով ազդու քարոզիչ կենարար Բանին և լու-  
սամիտ ուսումնասէր, եկեղեցիներ և ուսումնարան-  
ներ բարեզարգելու մէջ շնորհաբար լինելուն համար՝ ար-  
ժանանում է Գէորգ Կաթողիկոսից Եպիսկոպոսութեան  
բարձր աստիճանին 1879 թ. յունիս ամսին. 1882 ին

ստանում է Ս. Աննայի Ուստիճանի շքանշան. 1892 թ. հանգ. Մակար կաթողիկոսը փոխադրում է նորան Գանձակ յաջորդութեան պաշտօնով, ուր և գործում է որպէս լաւ հոգևորական. իւր ազգու քարոզներով Մուշ, Տարոն, Վան և ուր որ եղել է միշտ ուսման կարօտ մանկոց համար ուսումնարանների բացման հոգատար է եղած, նոյնպէս և Գանձակում բացել է երկուս ուսումնարան Վուսաւորիչ եկեղեցւոյ համար, հեռաւոր տեղից քանքաններ հանել տալով առողջարար ջուր է բերել տալիս Գանձակի, իւր հայրական յորգորներն անպտուղ ջմնալով ժողովուրդի կողմից ուրախութեամբ կատարւում էին միշտ և ամեն տեղ: Մակար կաթողիկոսի մահուանից յետոյ նշանակւում է Ս. Էջմիածնի Արհաթի անգամ և վանքի տնտեսական մասին վերատեսուչ, որ և ամենայն բարեխղճութեամբ կատարում էր. չէր զլանար երբէք կարօտ հեղինակներին իրենց աշխատութիւնները ի լոյս ածելու համար, օգնում էր նիւթապէս և խրախուսում բարոյապէս՝ բարի օրինակ լինելով այլոց. այլև ինքը հանգուցեալը ունի մի ձեռագիր աշխատութիւն, որ է մանրամասն նկարագիր Կարսի և Գանձակի վիճակներին:

Մասնակից է եղած երկու կաթողիկոսների ընտրութեանց. վերջի ժամանակներս Ատրպատականի ժողովրդոց խնդրանաց համաձայն Վեհ. Հայրապետը նշանակում է նոյն վիճակի ժամանակաւորապէս առաջնորդ, տալով առանձին կոնդակաւ Արքեպիսկոպոսութիւն. վերջին հրաժեշտը տալով Ս. Էջմիածնին՝ ճանապարհ է ընկնում դեկտ. 2 ին և հասնելով Զուղա՝ ճանապարհին անակրնկալ հիւանդութեամբ վախճանւում է և թաղւում անդ դեկտ. 9 ին:

Որոց բարիս գործեալ իցէ ի յարութիւն կենաց: Հանգիստ ոսկերացդ, անխոնջ մշակ Հայաստանեայց եկեղեցւոյ:

